

Փ Ո Ւ Յ

Ի հանդիսաւոր աւուր տօնի վըկայիցս
Եկայք սըրբասէր ժողովք՝ հողւով հընչեցէք .
Յանձին խրախուսեալ բերցուք զօրինակ սոցա .
Ի մարտի յաղթեալ սպանցուք զԲելիարըն չար :
Արեամբ չափ արի գըտցուք ի յասպարիսիս
Ազդոյ վէր տացուք նըմա՝ մերըն թշնամոյն :
Կենդանի հողւով ելցուք նըման վըկայիցս .
Զմարմնոյ մեռուցեալ սպանցուք զանդամս երկրաւորս .
Որդիք Սիոնի նորոյ զարթիք արութեամբ ,
Յաղթեալ քաջութեամբ առցուք զպըսակն անթառամ .
Բարեխօս առ Տէր կալցուք զարեամբ նահատակսն
Զվարդան եւ զընկերս իւր սուրբ , զվըկային վըկայսն :
Երբեակ կատարեալ անձանց եւ մի տէրութեան
Ընդ սոսա հանցուք երգով զօրհնաբանութիւն :

Ի ՏԵԱՌՆ ԸՆԴԱՌԱՋ

Յիսուս տղայ մանուկ որդի անծերունի հօր ,
Հօր հաշտ կամարար , մատամբս աղաչեմ ,
Շըրթամբքս պաղատիմ՝ զիս արձակեա Տէր :
Տէր իմ տէր Յիսուս , զոր կապեցերս՝ այժմ արձակեա ,
Նոյն ահա տեսի զհեթանոսաց ըզլոյսդ :
Լոյսն ի լուսոյ գիր թողութեան մեզ ծագեցար ,
Որ ընդ ծերունոյն հայցեմ՝ թող մեզ Տէր զգիր պարտեաց ,
Հայցմամբ ծընողի քո , որ լըրմամբդ եղեր մեզ թողութեան ամպ :
Ամպ ամարայնոյ ցօղ ձիւնանման մեզ ծագեցար ,
Տըղայ քառասնօրեայ յայտնեալ մանուկ դու :
Դու ի սըրբութեան սըրբարանի սուրբ սուրբ եւ սըրբութեան սիրող ,
Սըրբեա զմեզ ի մեղաց՝ կենդանարար քո գալըստեամբդ .
Ընդ մեզ Աստուած յայտնեալ , փառք իսրայելի ժողովըրդեան քում :

Տաղիս հեղինակն՝ Կիմացուի Փօլին տնապետի տառերէն թէ կոչուէր ՅԱԿՈԲ . բայց որ Յակոբն է դա . Սանահեցին կամ Քարափնեցի , 'ի ԹՎ գալու , որում կ'ընծայուի յոմանց « Յանսկզբնական ծոցոյ հօր » շարականն հանգստեան , և որոյ տնապետիք այլ Յօլի կապեն , թէ Յօլի էրաթիշոմն որ յիշուի և կարծուի 'ի վերջ ԹԲ դարու , թէ այլ

ոմն . ով և է՝ թուի այն՝ որ նոյնպէս Յակոբ կապող տնապետիք մեղեդի մի այլ գրած է քնարերգակ ոճով , շատ աւելի վսեմ և գեղեցիկ քան զայս տաղս . զոր և սպասենք կարդալու Յարութեան օրերուն : Իսկ 'ի գովեստ վարդանանց եթէ ուրիշ տաղ այլ սիրեա՝ կարդա՝ 'ի Զ հատոր օրագրիս , երես 259 :